ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

29 սեպտեմբերի հինգշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

137
(2617)

100 դրամ

քաղաք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 101

2019 թվականի սեպտեմբերի 17-ին Փաշինյանը հերթական անգամ ներկայացնում էր իր 100 փաստերը: Փաստերից մեկով նա խոսում է Ֆիզիկայի ինստիտուտի արագացուցչի մասին: 98-րդ կետով Փաշինյանը հայտարարում է. «Գործարկվել է Ֆիզիկայի ինստիտուտի արագացուցիչը, որը գործարկման էր սպասում արդեն 17 տարի»: Այս տարվա հուլիսին հայտարարվեց, որ Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայում գործարկվել է ցիկլոտրոն տեսակի արագացուցիչը: Այս արագացուցիչի պատմությունը գնում է 2008 թվական, երբ այն ժամանակվա էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանը հայտարարել էր, որ ցանկանում են ստեղծել Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոն Երեւանի Ֆիզիկայի ինստիտուտի տարածքում: Կառավարության 2009 թ.-ի որոշմամբ հավանություն տրվեց այս նախաձեռնությանը: Դրա շրջանակում էլ 2013-2015 թթ. Հայաստան էին ներմուծվել ցիկլոտրոնի սարքավորումները: Պնդումը, թե արագացուցիչը գործարկման էր սպասում 17 տարի, չի համապատասխանում իրականությանը, քանի որ որոշումը ընդունվել է 2009 թվականին՝ տասը տարի առաջ, իսկ սարքերը Հայաստանում են ոչ ավել, քան 6 տարի: Այս փոքրիկ հայտարարությունը եւս վկայում է, որ նա հերթական անգամ խաբել է ՀՀ հպարտ եւ արժանապատիվ քաղաքացիներին:

Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանը Մեծ Բրիտանիայի թագավորական ընտանիքի համար նոր արարողակարգ է սահմանել, ըստ որի՝ թագավորի կամ թագուհու մահվան ժամանակ հանգուցյալի դագաղի մոտ լուսանկարվելը ո՛չ որեւէ նորմով, ո՛չ էլ էթիկապես չի արգելվում: «Ժողովուրդ» օրաթերթը ՀՀ նախագահի աշխատակազմ հարցում էր ուղարկել՝ տեղեկանալու, թե ինչու է նախագահ Խաչատուրյանը որոշել լուսանկարվել Եղիսաբեթ 2-րդ թագուհու՝ վերջին հրաժեշտի արարողության ժամանակ նրա դագաղի մոտ: ՀՀ նախագահի հետ կապված այդ միջադեպը, հիշեցնենք, միջազգային հեղինակավոր բոլոր լրատվամիջոցների քննադատությանն էր արժանացել: Ի պատասխան մեր հարցմանը՝ նախագահի աշխատակազմից հայտնել էին. «Վերոնշյալ միջոցառումների ընթացքում արարողակարգային որեւէ խախտում տեղի չի ունեցել»: Ի՞նչ է ստացվում. աշխարհի մի շարք կշիռ ունեցող ԶԼՄ-ներ քննադատում են Վահագն Խաչատուրյանի՝ հանգուցյալի աճյունի մոտ դրսեւորած ոչ ընդունելի, էթիկական նորմերը խախտող վարքագիծը՝ նշելով, որ ցուցանակ է փակցված եղել լուսանկար անելու արգելքի մասին, իսկ Հայաստանից հակադարձում են, թե ոչինչ չեն խախտել, որեւէ արտառոց բան տեղի չի ունեցել: Ենթադրել կարելի է, որ հետայսու սգո բոլոր արարողությունների ժամանակ կարելի է անգամ դիրքավորվել, ապա նոր լուսանկարվել:



Երեկ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ ՔՊ խմբակցության երեք ժամանոց հանդիպմանը շատ լուրջ խոսակցություն է ընթացել կառավարության անդամների մասնակցությամբ: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ, բացի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանից, հանդիպմանը մասնակցել են նաեւ կառավարության այլ անդամներ եւս, մասնավորապես՝ փոխվարչապետ Միհր Գրիգորյանը, Պետական վերահսկողության ծառայության պետ Ռոմանոս Պետրոսյանը, վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը, ՔՊ վարչության այլ անդամներ եւս: Հանդիպման սկզբում հիմնականում խոսել է Նիկոլ Փաշինյանը, որից հետո նրան նաեւ հարցեր են ուղղել: Մենք տեղեկացանք, որ տեղի է ունեցել շատ բաց խոսակցություն, եւ Փաշինյանը չի թաքցրել ոչինչ եւ մանրամասն ներկայացրել է երկրում առկա վիճակը: Պատգամավորների մտահոգությունն առկա իրավիճակի վերաբերյալ ավելի է խորացել վարչապետի հետ հանդիպումից եւ նրա անկեղծ եւ բաց տեքստով խոսքերից հետո: Հանդիպմանը ներկա են եղել ՔՊ խմբակցության գրեթե բոլոր պատգամավորները: Ինչպես շատ այլ հանդիպումների ժամանակ, այս անգամ եւս պայմանավորվածություն է եղել խոսակցությունը պահել փակ դռների հետեւում:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ 1,5 տարի անց նախաքննական մարմինը որոշել է ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդական, Սյունիքի նախկին մարզպետ Մելիքսեթ Պողոսյանի որդու քրեական վարույթով մինչեւ վերջ գնալ: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ քրեական վարույթով նախաքննության ավարտ է հայտարարվել, եւ գործը ուղարկվել է ՀՀ գլխավոր դատախազություն այն հաստատելու եւ դատարան ուղարկելու համար: Հիմա գնդակը դատախազության դաշտում է, տեսնենք՝ ինչ որոշում կկայացնի դատախազությունը: Հիշեցնենք, որ Սյունիքի նախկին մարզպետ, ՔՊ-ական Մելիքսեթ Պողոսյանի որդին եւ մյուս նախկին մարզպետ Սուրիկ Խաչատրյանի մտերիմները կարողացել էին համաձայնության հասնել եւ հաշտվել, ավելին՝ նախաքննական մարմինը որեւէ առերեսում չարեց կողմերի հետ, ու այս վիճակով գործով նախաքննության ավարտ է հայտարարվել: Ինչպես հայտնի է, 2021 թվականի հուլիսի 15-ի ուշ երեկոյան կրակոցներ էին հնչել Գորիս քաղաքում, ինչի հետեւանքով նախկին մարզպետ Սուրիկ Խաչատրյանի մտերիմներից մեկը վիրավորվել էր, եւ նրան տեղափոխել էին Երեւան: Այնուհետեւ հայտնի դարձավ, որ կրակոցի կիզակետում է հայտնվել Սյունիքի նախկին մարզպետ Մելիքսեթ Պողոսյանի որդին՝ Կարեն Պողոսյանը, քանի որ նախկին մարզպետ Սուրիկ Խաչատրյանի մտերիմներն ու Մելիքսեթ Պողոսյանի որդին հին հաշիվներ են ունեցել:

50/50 ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ԴԵՄ ԵՆ ԱԼԻԵՎԻ ՍԱԴՐԱՆՔՆԵՐԻՆ

Ադրբեջանագետ Արշյոմ Տոնոյանն ասում է, որ Ադրբեջանում 50/50 հարաբերակցությամբ դեմ են նախագահ Իլհամ Ալիեւի կողմից Հայաստանի նկատմամբ հրահրվող սադրանքներին. «Ադրբեջանցիների մի մասն Ալիեւին ասում է՝ եթե տարիներ ի վեր դու բողոքել ես, որ Հայաստանը խախտում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, ապա ինչո՞ւ ես այժմ ինքդ խախտում ՀՀ-ի տարածքայնությունը»:

-Պարոն Տոնոյան, այս օրերին, երբ Հայաստանում տարբեր հասարակական տրամադրություններ են, երբ հնարավոր են նոր հարձակումներ (այդ մասին նաեւ խոսում են իշխանության տարբեր թեւի ներկայացուցիչները), հետաքրքիր է, թե Ադրբեջանում այս երկօրյա հարձակումից հետո ինչ իրավիճակ է, Ադրբեջանի հասարակությունն ինչ է խոսում:

-Իրականում ադրբեջանական հասարակության մեջ էլ քիչ չեն մարդիկ, որոնք հավատում են, որ Ադրբեջանը հերթական անգամ կգնա սադրանքի: Շեշտում եմ սադրանք, քանի որ այս վերջին հարձակումը Ադրբեջանի կողմից Հայաստանի սահմաններին իրենց հասարակության տարբեր ոլորտներում նույնպես դիտվեց որպես սադրանք, եւ ակնհայտորեն դեմ արտահայտվեցին Իլհամ Ալիեւին: Ոչ միայն դեմ արտահայտվեցին Ադրբեջանում բնակվող ադրբեջանցիները, այլ նաեւ Ադրբեջանից դուրս բնակվող ադրբեջանցիները, որ տոկոսային հարաբերությամբ բարձր թիվ է կազմում: Մենք պետք է արձանագրենք, որ թերեւս առաջին դեպքն է, որ տոկոսային բավական շոշափելի քանակ հասարակության դեմ է արտահայտվում իր իշխանությունների սադրած ռազմական ագրեսիային: Նախկինում ինչքան էլ բռնապետական էին Ադրբեջանի քայլերը 2020թ.-ի արցախյան պատերազմի ժամանակ, միեւնույնն է, Ադրբեջանի բնակչությունը սատար կանգնեց իր երկրի իշխանությանը, իսկ այս անգամ չկա նմանատիպ իրավիճակ: Եթե համեմատելու լինենք, ապա այս անգամ 50/50 հասարակությունը դեմ է արտահայտվում այս գործողություններին եւ իր երկրի իշխանությանը: Հենց այս դեմ արտահայտվողներն էլ պնդում են, որ իր երկիրը հերթական անգամ կգնա նոր սադրանքների:

-Դեմ են, քանի որ զոհեր եւ վիրավորնե՞ր են ունենում, թե՞ դժգոհության այլ առիթներ կան:

-Ոչ միայն, այլ առիթներ էլ կան, հատկապես եթե ցիտեմ եւ մի տեքստ դուրս բերեմ հայտարարություններից, կարծիքներից կամ գրառումներից: «Չի կարող մի երկիր մեկ այլ երկրի 30 տարի մեղադրել ագրեսիայի եւ սեփական տարածքային ամբողջականությունը խախտելու համար, հիմա ինքը իրականացնի նույն գործողությունները». սա պայմանական տեքստ է, որը ասվում է շատերի կողմից: Իրենք համարում են, որ իրենց ղեկավարությունը եւ ռազմաքաղաքական ղեկավարությունը դիմել են սադրանքների որոնք ուղղված են եղել Հայաստանի ամբողջական տարածքների դեմ:

-Իսկ այդ տեսակետը ո՞ւմ կողմից է հնչում՝ հասարակ քաղաքացիների՞, փորձագիտական խմբերի՞, ընդդիմադիր դաշտի՞, թե՞ քաղհասարակության ներկայացուցիչների:

-Եթե փորձեմ տարանջատել, ապա ավելի շատ սովորական քաղաքացիների եւ որոշակիորեն հասարակական ակտիվություն ունեցող մի շերտի, խաղաղասերների, իշխանությունների հանդեպ բողոք ունեցողների, բայց ընդդիմադիր կուսակցություններին չհարողների: Ընդդիմադիր ուժերը եւս հանդես են գալիս այս օրերին իշխանությունների դեմ, բայց իրենց բողոքի հիմքում ոչ թե այն է, թե ինչու է կազմակերպվել ռազմավարական ագրեսիա Հայաստանի դեմ, այլ թե ինչու են տվել այդքան զոհեր եւ արդյունք չեն գրանցել:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ՆԱԽԱԳԻԾ

ՆՎԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

«Հանրային ծառայության մասին» օրենքում եւ հարակից օրենքներում նոր կարգավորումների ընդունումը պայմանավորված է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց եւ հանրային ծառայողների շահերի բախման, պահանջների անհամատեղելիության եւ նվերների ինստիտուտի վերաբերյալ առկա օրենսդրական լուծումների կատարելագործման, ինչպես նաեւ ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումն ապահովելու անհրաժեշտությամբ: Այս մասին ասել է ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Երանուհի Թումանյանցն ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի սեպտեմբերի 28-ի նիստում: Կառավարության հեղինակած նախաձեռնությունը քննարկվել է առաջին ընթերցմամբ:

Նախաձեռնությամբ առաջարկվում է Հայաստանի վերաբերյալ զեկույցում ԳՐԵԿՈ-ի ներկայացրած հանձնարարականների հիման վրա հանրային պաշտոն զբաղեցնող անձանց եւ հանրային ծառայողների կողմից նվերներ ստանալու սահմանափակումներ նախատեսող կարգավորումները համախմբել մեկ իրավական ակտում: Առաջարկվում է նվերներ ընդունելու սահմանափակումների խախտման դեպքում կարգապահական պատասխանատվության փոխարեն հանրային պաշտոն զբաղեցնող անձանց եւ հանրային ծառայողների համար սահմանել վարչական պատասխանատվություն:

Նաեւ կհստակեցվեն հանրային պաշտոն զբաղեցնող անձանց եւ հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջները, կկատարելագործվեն շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված գործիքները, կընդլայնվի փոխկապակցված անձանց, ինչպես նաեւ հայտարարագիր ներկայացնող անձանց շրջանակը:

Կառավարության առաջարկած փոփոխությունների ընդունման դեպքում կսահմանվի եւ կհստակեցվի Հակակոռուպցիոն կոմիտեում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանումներում աշխատած անձանց յուրաքանչյուր տարվա համար հավելավճար տրամադրելու կարգը: Գործող կարգավորմամբ՝ի տարբերություն այլ մարմինների՝ վերոնշյալ անձանց համար աշխատանքային եւ ծառայության ստաժի հաշվարկման որեւէ մեխանիզմ նախատեսված չէ. ո՛չ հավելավճարի եւ ո՛չ էլ համապատասխան տարիների կտրվածքով գործակիցների աճ տեղի չի ունենում:

«Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում առաջարկվող լրացումները եւ փոփոխությունները ՀՀ ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի սեպտեմբերի 28-ի նիստում ներկայացրել է արդարադատության նախարարի տեղակալ Երանուհի Թումանյանցը:

Նոր կարգավորմամբ կապահովվի ՀՔԾ նախկին աշխատակիցների՝ սոցիալական երաշխիքներից օգտվելու իրավունքի իրացումն այլ աշխատանքի անցնելու պարագայում: Հնարավորություն կտրվի Դատախազությունում կամ Քննչական կոմիտեում ծառայությունը շարունակելու պարագայում օգտվել հատուկ քննչական ծառայությունում աշխատած տարիների ստաժի նկատմամբ հավելավճար հաշվարկելու իրավունքից: Կկարգավորվեն նաեւ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի վարձատրության հետ կապված հարաբերությունները:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐԴՅՈՔ ՆՈՐԻՑ ԿՀԱՆԴԻՊԵ՞Ն

ArmLur.am-ը Մայր Աթոռից հետաքրքրվեց, թե արդյոք Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի կողմից Հայաստանի ու Արցախի նախկին նախագահներին նոր հանդիպման առաջարկ-հրավեր արվել է: Եթե այո, ապա ի՞նչ արձագանքներ են եղել նրանց կողմից: Ի պատասխան՝ Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի տնօրեն տեր Եսայի քահանա Արթենյանը հղում արեց ավելի վաղ հրապարակված հաղորդագրությանը: «Հաղորդագրության մեջ ասված է, որ որոշում է ընդունվել շարունակել հանդիպումները: Ավելին ասել չեմ կարող»,- նշեց նա:

Նույն սեղանի շուրջ արդյոք նորից կնստեն Հայաստանի, Արցախի նախկին նախագահներն ու կաթողիկոսը (դեռ չասած, որ խոսվում էր առաջիկայում Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջինին նույնպես հրավիրելու մասին)՝ բարդ է ասել, բայց տրամաբանությունն ու այս օրերին հնչող հայտարարությունները հուշում են՝ ամբողջական կամզով նորից հավաքվելը գուցե արդեն չստացվի:

ՀՀ առաջին նախագահ Տեր-Պետրոսյանի վերջին հարցազրույցից հետո, ինչի ժամանակ նա որոշակիորեն գաղտնազերծեց, թե ինչ են խոսել ու քննարկել հանդիպման ժամանակ, ՀՀ երկրորդ նախագահի թիմակիցներն ու ԱԺ «Հայաստան» խմբակցության ներկայացուցիչները մեկը մյուսի հետեւից սկսեցին առաջ տանել այն միտքը, որ իրենք, այսպես ասած, «կապիտուլյացիայի» մաս չեն կազմի ու չեն արդարացնի Փաշինյանի գործելաոճը:

Այս ամենից ենթադրել կարելի է, որ Տեր-Պետրոսյան-Քոչարյան արդեն իսկ նկատելի «առճակատումը» նախագահների ու կաթողիկոսների՝ առաջիկայում նախանշվելիք հանդիպումը կամ հարցականի տակ կդնի, կամ այն ոչ ամբողջական կազմով տեղի կունենա:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՉԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՎԵԼ

2022 թվականի սեպտեմբերի 28-ին ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներն ավարտել են սեպտեմբերի 25-ին տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների քվեարկության արդյունքների վերահաշվարկի աշխատանքները: Այս մասին տեղեկացնում է ԿԸՀ-ն:

Ներկայացված դիմումների եւ Ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1.1 մասի նոր կանոնակարգման համաձայն՝ ընդհանուր առմամբ վերահաշվարկվել են թվով 53 տեղամասերի քվեարկության արդյունքները:

Վերահաշվարկի արդյունքում քվեարկության արդյունքների էական փոփոխություններ չեն արձանագրվել:

Հիշեցնենք՝ սեպտեմբերի 25-ին տեղական ինքնակառավարման մարմինների համամասնական ընտրակարգով հերթական ընտրություններ էին անցկացվել Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի եւ Տավուշի մարզերի 17 համայնքում, իսկ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքում՝ մեծամասնական ընտրակարգով հերթական ընտրությունները:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀՀ-ՈՒՄ ՆՇՎՈՒՄ Է

Հայաստանում յուրաքանչյուր տարվա հոկտեմբերի վերջին կիրակի օրը կնշվի ճանապարհաշինարարի օր: ArmLur.am-ը տեղեկացավ, որ յուրաքանչյուր տարի Ճանապարհաշինարարի օրը անդրադարձ կկատարվի ոլորտում իրականացված բարեփոխումներին եւ ձեռքբերումներին: Ավելին՝ մեզ հայտնի դարձավ, որ այդ տոնը կնշվի «Ճանապարհաշինարարներ» կամ «Անվերջության ժապավեն» հուշարձանի տարածքում: Ի դեպ, հուշարձանը գտնվում է Մ-4, Երեւան-Սեւան-Իջեւան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի 32-րդ կիլոմետրում, որը ամբողջությամբ վերականգնվել եւ բարեկարգվել է վերջերս: Նշենք, որ Ղազախստանը ներկայում ամեն տարի օգոստոսի 1-ին կիրակին նշում է Տրանսպորտի աշխատողների օրը: Բելառուսը, Ղրղզստանը եւ Ուկրաինան յուրաքանչյուր տարվա հոկտեմբերի վերջին կիրակին նշում են Ավտոմոբիլիստի եւ ճանապարհաշինարարի օրը, իսկ Ռուսաստանը (հոկտեմբերի վերջին կիրակին) եւ Տաջիկստանը (հոկտեմբերի երկրորդ կիրակին) նշում են Ճանապարհաշինարարի օրը:

ԽԱԽՏՈՒՄ Է ԵՂԵԼ

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության վրաց-հայկական «Սադախլո»-ի մաքսային անցակետում կանգնեցվել է Հայաստանի Հանրապետությունից եկող սառեցված ձկներով բեռնված ավտոմեքենա: «ԱԼԻՔ»-ի հրապարակած տեղեկության համաձայն՝ Վրաստանի մաքսային վարչության սանիտարական, բուսասանիտարական եւ անասնաբուժական հսկողության բաժնի անասնաբույժները սահմանային-կարանտինային հսկողության ընթացակարգերի իրականացման ընթացքում բեռի վրա հայտնաբերել են մակնշման անհամապատասխանություն եւ ջերմաստիճանի ռեժիմի խախտում: «Վրաստանի կառավարության N463 որոշմամբ՝նշված բեռը (1008 կիլոգրամ սառեցված ձուկ) ենթակա էր վերադարձման արտահանող երկիր»,- նշված է եկամուտների ծառայության հաղորդագրության մեջ:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ կառավարությունում տեղի է ունեցել խորհրդակցություն 2023թ. պետական բյուջեի նախագծի մակրոտնտեսական, հարկաբյուջետային եւ ծախսային շրջանակի վերաբերյալ: Ֆինանսների նախարար Տիգրան Խաչատրյանը հանդես է եկել զեկուցումով՝նշելով, որ 2023թ. պետական բյուջեի նախագիծը ձեւավորվել է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրով սահմանված անվտանգային, տնտեսական եւ սոցիալական ոլորտների առաջնահերթությունների հիման վրա: Նախարարն անդրադարձել է մակրոտնտեսական ցուցանիշների եւ հարկաբյուջետային քաղաքականության կանխատեսումներին, մանրամասներ ներկայացրել ոլորտային ծախսերի եւ ըստ գերատեսչությունների առաջարկվող չափաքանակների վերաբերյալ: Ներկայացված նախագծի առնչությամբ ծավալվել է մտքերի փոխանակություն, քննարկվել են կառավարության ծրագրով սահմանված կապիտալ եւ ընթացիկ ծախսերին, ծախսային նոր նախաձեռնություններին վերաբերող մի շարք հարցեր:

ԱՍՈՒԼԻՍ

ԿՈՆՍՈԼԻԴԱՑԻԱՅԻ ԿԱՐԻՔ ՉԿԱ

«Կապիտուլյացիայի համար կոնսոլիդացիայի կարիք չկա», - ակնհայտորեն Տեր-Պետրոսյանի առաջարկը նկատի ունենալով՝ երեկ՝ մամուլի ասուլիսի ժամանակ, հայտարարեց երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը:



Քոչարյանը Տեր-Պետրոսյանի առաջարկը կատեգորիկ անընդունելի որակեց, բայց նաեւ ասաց՝նույն ձեւաչափով հետագա քննարկումների համար դուռը բաց է:

«Հնչում է նաեւ թեզ՝ միավորվենք իշխանության շուրջ: Խնդիրը լուծելու համար առաջին հերթին պետք է ախտորոշես այդ խնդրի պրոբլեմը եւ չեզոքացնես այդ պրոբլեմը: Հիմա մեզ ասվում է՝ միավորվենք պրոբլեմի շուրջ, հիմա մեր նպատակն ի՞նչն է՝փրկե՞լ Հայաստանը, թե՞ փրկել Հայաստանի պրոբլեմը: Իշխանափոխությունը իմպերատիվ պահանջ է», - նշեց Քոչարյանը:

Արդյոք նախկին նախագահների հանդիպմանը հենց իշխանափոխությա՞ն առաջարկով էր գնացել: Քոչարյանը չբացահայտեց, բայց խոսեց այսօրվա իրավիճակում ընդդիմության ու իշխանության անելիքների մասին իր պատկերացումներից. «Ճգնաժամից երկրներին ընդհանրապես դուրս են հանում կառավարությունները, իշխանությունը, ոչ թե ընդդիմությունը: Ընդդիմությունը կարող է ճգնաժամի ժամանակ իշխանափոխության հարց դնել, եթե բավարարում է ուժերը, հասնել իշխանափոխության եւ հետո հաղթահարել այն ճգնաժամը, որը կա: Ընդդիմությունը ի՞նչ է առաջարկում. նա եմ առաջարկում, ինչ առաջարկվել է կոնսոլիդացիայի համար. այո, առաջարկում ենք հանրային կոնսոլիդացիա, բայց ոչ թե կապիտուլյացիայի համար»:

Հարցին՝ վերջերս Նիկոլ Փաշինյանն ասաց, որ մենք փող ունենք, բայց մեզ զենք վաճառող չկա, սա Փաշինյանի հերթական պոպուլիստական հայտարարությունն էր արդյոք, թե սրա տակ լուրջ հիմքեր կան, ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը պատասխանեց.

«Ես 10 տարի նախագահ լինելու ժամանակ նման խնդիր չեմ ունեցել, ես նույնիսկ լավ չեմ պատկերացնում, թե ինչու այսօր պետք է նման խնդիրներ առաջանան: Ես չեմ հասկացել վարչապետի ելույթի այդ հատվածը:

Հիմա եթե դու ուղղակի մեկին ասում ես՝ դե զենք ծախի, նա ասում է՝դե որոշ խնդիրներ կան, ու դրանով դու դուրս ես գալիս այդ խոսակցությունից, չես շարունակում… Ես չգիտեմ՝ոնց են աշխատում: Երբեք այդպիսի խնդիր մենք չենք ունեցել, հիմա մենք ունենք եւս մեկ պրոբլեմ, օրինակ՝ 44-օրյա պատերազմի ժամանակ Վրաստանը փակեց իր օդային տարածքը, եւ Ռուսաստանից այստեղ ռազմական օգնություն տեղափոխելը պրոբլեմ դարձավ: Իմ ժամանակ նման խնդիր չի եղել, ինձնից հետո 3-րդ նախագահի ժամանակ Հայաստանը գնեց Ռուսաստանի ամենից ժամանակակից զենքերից մեկը՝ «Իսկանդեր»-ը: Ինչպե՞ս են դա բերել Հայաստան, ինչո՞ւ էր հաջողվում անել դա իմ ժամանակ, 3-րդ նախագահի ժամանակ, եւ ինչո՞ւ դա պրոբլեմ դարձավ հիմա. այդ հարցադրումներն ինձ չպետք է անեք, ես չգիտեմ՝որտեղից է դա գալիս:

Երբ Վրաստանը փակեց օդային տարածքը, դա լուրջ ազդեցություն ունեցավ նաեւ պատերազմի արդյունքների վրա: Հիմա, երբ Վրաստանի վարչապետի հետ գրկվում են, այդ հարցը չե՞ն տալիս, թե պատճառն ինչն էր, որովհետեւ հստակ գիտենք, որ Թուրքիան շարունակում էր մատակարարել զենք եւ զինամթերք Ադրբեջանին հենց այդ ժամանակահատվածում:

Խորհրդարանի բոյկոտը հիմա մասնակի բոյկոտ է, տեսնում եք, որ գոնե շենք գնում են, որոշ գործիքակազմ խորհրդարանական ընդդիմության կողմից այսօր օգտագործվում է: Հիմա աշխատանք է գնում, թե ինչ կարող ենք անել, որ ընդդիմադիր շարժման նոր աճի կետեր գտնենք: Այդ ծրագիրը մշակվում է, դեռ վերջնականացված չէ: Կարող եք հիմա արձագանքել՝ժամանակ չունենք, այո, դա կա, բայց մենք նաեւ չենք ուզում եւս մեկ ալիք ստեղծել, որը կհիասթափեցնի մեր ժողովրդին: Եթե պետք է ամեն ինչ լինի «Դիմադրություն» շարժման ծավալով, մենք գիտակցում ենք, որ այդ ծավալը բավարար չէ: Ուրեմն կա՛մ պետք է նոր ուժեր, նոր մարդիկ ներգրավենք այս պրոցեսի մեջ, կա՛մ պետք է չանել քայլեր, որոնք ի սկզբանե դատապարտված են լինելու անհաջողության: Ի դեպ, ես «Դիմադրություն» շարժումը չեմ համարում չհաջողված, այդ շարժումն ի սկզբանե չի ստեղծվել իշխանափոխության թեզերով, ուղղակի ես ձեզ հիշեցնեմ, որ սկսվեց այն ժամանակ, երբ վարչապետը խորհրդարանում հնչեցեց Արցախի հարցով նշաձողը իջեցնելու թեզը: Ես համոզված եմ եւ գիտեմ, որ այդ թղթերն արդեն ստորագրված կլինեին, եթե չլիներ «Դիմադրություն» շարժումը»,-ասաց Քոչարյանը:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՔՆՆԱՐԿՈՒՄ ⇨

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է.

«Երեկ սիրով հյուրընկալեցի բարեկամ Ֆրանսիայի Արտակարգ եւ լիազոր դեսպան Ն.Գ. տիկին Անն Լույոյին:

Քննարկեցինք Հայաստանի առջեւ ծառացած մարտահրավերներն ու անվտանգային հարցերը: Անդրադարձանք մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Ֆրանսիայի օրինակելի մասնակցությանը, որը հնարավորություն է տալիս արագ արձագանքել իրավախախտումներին եւ ձեռնարկել համապատասխան քայլեր՝ խախտված իրավունքները վերականգնելու ուղղությամբ»:

ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ Է

Փարիզի փաստաբանների միության խորհուրդը դատապարտում է ադրբեջանական բանակի կողմից հայ ժողովրդի եւ Հայաստանի Հանրապետության տարածքի նկատմամբ իրականացվող ագրեսիան: Այս մասին տեղեկանում ենք ՀՀ փաստաբանների պալատի տարածած հաղորդագրությունից: Ըստ հաղորդագրության՝ խորհուրդը հիշեցնում է իր հավատարմությունը միջազգային իրավունքի սկզբունքներին եւ միջազգային հանրության հովանու ներքո կոչ է անում անհապաղ դադարեցնել բռնությունը: Փարիզի փաստաբանների միությունը վերահաստատում է իր համերաշխությունը Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի գործընկերների հետ՝ ընդգծելով, որ միմյանց միջեւ պահպանվում են պատմական հարաբերություններ, որոնք մշտապես վերահաստատվում են համագործակցության պայմանագրերով:

ՀԻՄՆԱՎՈՐՎԵԼ Է

ԿԱՇԱՌՔ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԵԿՆԵՐԻՆ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված իրական վարույթների շրջանակներում ձեռք բերված բավարար աղացույցների համակցությամբ հիմնավորվել է, որ վարորդներ Կ. Մ.-ն եւ Ա. Ն.-ն իրենց կողմից թույլ տրված վարչական իրավախախտումներին ընթացք չտալու համար կաշառք են առաջարկել ՀՀ ոստիկանության պարեկներին:

Ինչպես հայտնում են Հակակոռուպցիոն կոմիտեից, պարզվել է, որ վերջիններս ծառայություն իրականացնելու ժամանակ Վանաձոր-Դիլիջան ավտոճանապարհին կագնեցրել են Կ. Մ.-ի վարած ավտոմեքենան նրա կողմից վարչական իրավախախտում թույլ տալու, այն է՝ անթույլատրելի տեղում վազանց կատարելու պատճառով:

Պարեկային ծառայության աշխատակիցները Կ. Մ.-ին պարզաբանել են տրանսպորտային միջոցը կանգնեցնելու պատճառը եւ վերջինից պահանջել համապատասխան փաստաթղթերը վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու համար: Այդ ընթացքում Կ. Մ.-ն մի քանի անգամ առաջարկել է կազմել տուգանքի ավելի փոքր չափ նախատեսող վարչական իրավախախտման արձանագրություն, սակայն պարեկային ծառայողների կողմից մերժում ստանալուց հետո գրպանից հանել է 15.000 ՀՀ դրամ եւ փորձել որպես կաշառք տալ նրանց: Նույն պահին ոստիկանության աշխատակիցները Կ. Մ.-ին ձերբակալել եւ տեղափոխել են ոստիկանության բաժին:

Կ. Մ.-ին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով: Վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել բացակայելու արգելքը:

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված մեկ այլ քրեական վարույթի նախաքննությամբ էլ հիմնավորվել է, որ տրանսպորտային միջոցը առանց հաշվառման համարանիշի վարող Ա. Ն.-ն չի ենթարկվել ավտոմեքենան կանգնեցնելու պարեկների հրահանգին եւ դիմել է փախուստի: Պարեկները, սակայն, կանգնեցրել են ավտոմեքենան, այն տեղափոխել ոստիկանության հատուկ պահպանվող տարածք, որտեղ կատարվել է վարորդ Ա. Ն.-ի սթափության զննում: Արդյունքում պարզվել է, որ վերջինս գտնվել է ոչ սթափ վիճակում: Պարեկների կողմից կազմվել են վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ տրանսպորտային միջոցն առանց հաշվառման համարանիշների եւ ոչ սթափ վիճակում վարելու համար:

Վերոնշյալ արձանագրությունները կազմելու ժամանակ Ա. Ն.-ն մոտեցել է պարեկներից մեկին եւ ավտոմեքենան հատուկ պահպանվող տարածքից հանելու դիմաց առաջարկել ռեստորանում հյուրասիրել, սակայն մերժում է ստացել, որից հետո առաջարկել է 16.000 ՀՀ դրամ կաշառք: Կաշառք առաջարկելու կասկածանքով Ա. Ն.-ն ձերբակալվել եւ տեղափոխվել է ոստիկանության բաժին:

Ա. Ն.-ին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

Ներկայացված մեղադրանքում Ա. Ն.-ն իրեն մեղավոր է ճանաչել, տվել խոստովանական ցուցմունք: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը:

Քրեական վարույթների նյութերը մեղադրական եզրակացությամբ հանձնվել են հսկողություն իրականացնող դատախազին՝ այն հաստատելու եւ դատարան ուղարկելու միջնորդությամբ:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՊԱՐԵՍՏԱՊԵՏԻ ԴՍՏԵՐԸ ՍԽՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔԸ

Իրավապահ համակարգում Մալաթիայի կրակոցներից հետո խիստ խորհրդակցություն է եղել. իրավապահները նշել են, թե երկրում առկա այս պայմաններում նմանօրինակ կրակոցներ արձակած անձինք թուրքից վատն են. եթե երկրում առկա լարված վիճակը նրանց չի անհանգստացնում, ապա նրանց այլ բառով բնորոշել հնարավոր չէ:

Ինչպես հայտնի է, սեպտեմբերի 24-ին Մալաթիայում աղմկահարույց կրակոցների հետեւանքով սպանվեց երկու անձ: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝վիճաբանությունը եղել է աղջկա համար: Իսկ կոնկրետ ի՞նչ աղջկա մասին է խոսքը: Բանն այն է, որ մի երիտասարդ սիրել է ոսկու շուկայի հետնամասում գտնվող պահեստապետի դստերը եւ այդ օրը իր ընկերների հետ գնացել եւ փորձել է խոսել իր սիրելի աղջկա հոր հետ: Խոսակցությունն այդքան էլ լավ ընթացք չի ստացել, եւ տղայի ընկերներից մեկը սկսել է կրակել, որի հետեւանքով երկու անձ սպանվեց: Մեզ հայտնի դարձավ, որ կրակողը ջավախահայ է եւ այժմ կալանավորված է:

Հիշեցնենք, որ սեպտեմբերի 24-ին մարտաֆիլմ հիշեցնող կրակոցներ են հնչել Երեւանում: Ժամը 21:00-ի սահմաններում ոստիկանության Մալաթիայի բաժին ահազանգ է ստացվել, որ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Վանցյան փողոցում՝ ոսկու շուկայի հետնամասում գտնվող պահեստային հատվածում, կրակոցներ են հնչել: Ոստիկանները դեպքի վայրում հայտնաբերել են տղամարդու դի, 1 հոգի էլ նշված վայրից տեղափոխվել է «Աստղիկ» բժշկական կենտրոն, որի կյանքը փրկել չի հաջողվել: Ասել է թե՝մեկ գիշերվա մեջ երկու անձ սպանվեց:

Փաստի առթիվ սպանության եւ սպանության փորձի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

Սեպտեմբերի 21-ին Եռաբլուրում 44-օրյա պատերազմում զոհված զինծառայողների ծնողներին բռնության ենթարկելու դեպքը նոր ընթացք կստանա: ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ իրավապահ համակարգում քննարկվում է միջադեպով քրեական վարույթ նախաձեռնելու հարցը, եւ դատելով իրավապահ համակարգում ծավալված խոսակցություններից՝ ամենայն հավանականությամբ քրեական վարույթ կնախաձեռնվի: Հիշեցնենք, որ վերոնշյալ օրը զինվորների հարազատների նկատմամբ բռնության դեպքերով ոստիկանության Ներքին անվտանգության ծառայությունում կատարվում է ծառայողական քննություն: Հիշեցնենք, որ ծնողներն այդ օրը փակել էին Եռաբլուրի մուտքը եւ պնդում էին, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին թույլ չեն տալու մոտենալ իրենց երեխաների շիրիմներին:

ԲԱԽՇԻՅԱՆԸ ԱՐԴԱՐԱՑՎԵՑ

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր (լիազորությունները կասեցված են) Բորիս Բախշիյանն արդարացվեց:

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը՝ դատավոր Լուսինե Սեփխանյանի նախագահությամբ, քիչ առաջ հրապարակեց վճիռը՝ արդարացնելով Բախշիյանին, ճանաչելով եւ հռչակելով դատավորի անմեղությունը: Այս մասին ArmLur.am-ը տեղեկանում է փաստաբան Երեմ Սարգսյանից:

ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝սեպտեմբերի 26-ին դատապարտյալների հիվանդանոցում ուշագրավ դեպք է եղել: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ վերոնշյալ օրը՝ գիշերը ժամը 4:00-ի սահմաններում, բանտից մեկ դատապարտյալի կտրված վերքերով շտապ տեղափոխել են հիվանդանոց: Ավելի ուշ պարզվել է, որ դատապարտյալը քրեակատարողական հիմնարկում սավանի միջոցով փորձել է ինքնասպան լինել:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՀԱԶԱՆԳ՝ ԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Սեպտեմբերի 27-ին արտակարգ դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 21:30-ի սահմաններում Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության 911 ճգնաժամային կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ Աճառյան փողոցի թիվ 33/30 հասցեի մոտ՝«Աթենք» գործարանի հարեւանությամբ, պայթուցիկ սարքի նմանվող իր կա: Դեպքի վայր են ժամանել ԱԻՆ ՓԾ ՔՊՈՒՀԿ սակրավորական խումբը, որը նշված վայրից վնասազերծել եւ անվտանգ վայր է տեղափոխել կորոզիայի ենթարկված մարտական ականանետի ական, որը եղել է առանց պայթուցիչի:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 27-ից 28-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 51 դեպք, որոնցից 6-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

2-ՐԴ ՄԵԾ ՁԱԽՈՂՈՒՄԸ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի որոշումներով 2019թ. սեպտեմբերի 12-ին՝ Իջեւան համայնքի ղեկավարի պաշտոնակատար, 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանը սեպտեմբերի 25-ին՝ Բերդ համայնքի ավագանու ընտրությունների օրը, գտնվել է Բերդ քաղաքում եւ համակարգել է ընտրություններում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության օգտին ձայներ բերելու գործը: Բերդ համայնքից հայտնում են, որ նա այդ նպատակով մոբիլիզացրել է Արծվաբերդի անտառտնտեսության պաշտոնյաներին, հանրակրթական դպրոցների տնօրեններին, Բերդի ԲԿ-ի ղեկավար կազմին եւ այլոց: Չնայած մարզպետի ջանքերին՝ ՔՊ-ն Բերդում պարտություն կրեց: Սա ՏԻՄ ընտրություններում մարզպետ Հայկ Ղալումյանի 2-րդ մեծ ձախողումն էր: 2021թ. դեկտեմբերի 5-ին՝ Նոյեմբերյան խոշորացված համայնքի ավագանու ընտրությունների օրը, մարզպետ Հ. Ղալումյանը Նոյեմբերյանի Հաղթանակ գյուղի ընտրական տեղամասի առաջ կանգնել էր, ինչը Ընտրական օրենսգրքի խախտում է: Տեսնելով, որ իրեն նկարահանում են, Հ. Ղալումյանն իր ուղեկիցների հետ ընտրական տեղամասի առջեւից շտապ հեռացել էր:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Դիլիջանի համայնքապետարանի պաշտոնական ինտերնետային կայքում Հայաստանում մշակվող աշնանանցան ցորենի մասին ընդարձակ տեղեկատվություն է զետեղված: Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչությունից տեղեկացա, որ Դիլիջան խոշորացված համայնքի Դիլիջան քաղաքում եւ համայնքի Հաղարծին, Թեղուտ, Գոշ, Հովք, Խաչարձան, Աղավնավանք գյուղերում ոչ մի մետր աշնանացան ցորեն չի մշակվում: Նույն կերպ Դիլիջանի համայնքապետարանը կարող էր համայնքապետարանի ինտերնետային կայքում բանանի մշակության մասին տեղեկատվություն զետեղել. զով Դիլիջանում գուցե բանան աճեցնող գտնվի:

ՉՀԵՌԱՆԱԼՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Բերդ քաղաքի նստավայրում ընթանում է Նոյեմբերյան քաղաքի բնակիչ Արման Սամվել Բարսեղյանի դատավարությունը: Ա. Բարսեղյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2018 կամ 2019 թվականի ընթացքում Երեւան քաղաքի որսորդական խանութներից գնել է օդաճնշիչ ատրճանակ, որը 2020 թվականի հայադրբեջանական պատերազմի ընթացքում ձեւափոխել եւ դարձրել է ակոսափող հրազեն, ապօրինի պահել Նոյեմբերյան քաղաքի Նոյեմբերի 29/12 հասցեում տեղադրված եւ իր կողմից վարձակալած վագոն-տնակում: Ա. Բարսեղյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 235 հոդվածի 1-ին մասով, նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԴՐԱՄԱՇՆՈՐՀ

ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ՝ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակութային ժառանգության եւ ժողովրդական արհեստների վարչության պետ Աստղիկ Մարաբյանը եւ վարչության գլխավոր մասնագետ Նաիրա Կիլիչյանը «ՀՀ Սյունիքի մարզի բանահյուսական ժառանգության համայնքահեն գույքագրումը, փաստաթղթավորումը եւ պահպանումը» ծրագրի շրջանակում նախարարությունում հանդիպել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջազգային փորձագետ, Թեհրանի Շահիդ Բեհեշտի համալսարանի դասախոս Ժանետ Բլեյքի հետ:

Նախարարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության փոխանցմամբ՝ հանդիպմանը մասնակցել են նաեւ ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի բանահյուսության տեքստաբանության բաժնի վարիչը եւ նույն բաժնի գիտաշխատողը:

Ողջունելով հյուրին՝ Աստղիկ Մարաբյանը նշել է, որ այս հանդիպումով ազդարարվում է մի շատ կարեւոր եւ եզակի իրադարձության մասին. ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2003 թվականի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայի շրջանակում «Միջազգային աջակցություն» անվանակարգով Հայաստանի Հանրապետությանը տրամադրվել է դրամաշնորհ (74,855.00 USD):

«Այս ծրագրի կարեւորագույն կետերից մեկն այն է, որ 2017 եւ 2019 թվականներին սկսված շարունակական համագործակցության արդյունքում նշյալ կոնվենցիայի շրջանակում ՅՈՒՆԵՍԿՕ-ի Թեհրանի տարածաշրջանային կենտրոնի հետ ուսուցողական հանդիպումներ են իրականացվել, որոնք վարել է տիկին Բլեյքը: Անդրադառնալով «ՀՀ Սյունիքի մարզի բանահյուսական ժառանգության համայնքահեն գույքագրումը, փաստաթղթավորումը եւ պահպանումը» հայտի բովանդակությանը՝ պետք է նշեմ, որ Սյունիքում՝ որպես Հայաստանի համար խիստ ռազմավարական տարածաշրջան, կհավաքագրվեն, կփաստաթղթավորվեն եւ կթվայնացվեն տեղական ոչ նյութական մշակութային ժառանգությանն առնչվող նյութերը՝ ստեղծելով Սյունիքի բանահյուսական ժառանգության ամբողջական տվյալների շտեմարան: Ծրագիրը կարեւորվում է նաեւ համայնքահեն բաղադրիչով, քանի որ այդ հետազոտություններն անմիջապես անցկացվելու են համայնքներում՝ կրողների հետ: Նրանց հետ աշխատանքի, ինչպես նաեւ կրթական ինստիտուտների հետ համագործակցության արդյունքում մենք կգույքագրենք մշակութային ժառանգությունը՝ ապահովելով այդ ժառանգության պահպանությունն ու փոխանցումը մեր սերունդներին»,- նշել է Աստղիկ Մարաբյանը եւ շնորհակալություն հայտնել Ժանետ Բլեյքին՝ խորհրդատվական եւ փորձագիտական աջակցության, ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի, ՀՀ ԿԳՄՍ նախարարության գործընկերներին, մասնավորապես՝ Նաիրա Կիլիչյանին, հայտի պատրաստման գործում անմիջական ներգրավվածության եւ ծրագրի ուղղությամբ տարված կարեւորագույն աշխատանքի համար:

«Շատ ենք կարեւորում այս ծրագրի իրականացումը հատկապես Սյունիքի մարզում, քանի որ Սյունիքը շատ հարուստ մշակութային ժառանգություն ունի: Մեծապես շնորհակալ ենք տիկին Ժանետ Բլեյքին, Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի գործընկերներին համագործակցելու համար, ինչը կարեւորվում է նաեւ պետական կառույց եւ գիտական կազմակերպություն ձեւաչափի համատեքստում»,- նշել է ԿԳՄՍՆ մշակութային ժառանգության եւ ժողովրդական արհեստների վարչության գլխավոր մասնագետ Նաիրա Կիլիչյանը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջազգային փորձագետ, Թեհրանի Շահիդ Բեհեշտի համալսարանի դասախոս Ժանետ Բլեյքը շնորհավորել է աջակցության ծրագրի ձեռքբերման համար եւ վստահություն հայտնել, որ հայ գործընկերները լավագույնս կիրականացնեն այն:

«Քանի որ Սյունիքում բանահավաքչական աշխատանքներ տարվել են 60-ական թվականներին, այս ծրագրով նոր աշխատանքներ կտարվեն եւ թարմ մոտեցում կլինի մարզի ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության գործում՝ որպես մշակութային տարածք: Տեսնում եմ՝ որքան ջանքեր են ներդրվում ժառանգության պահպանության ուղղությամբ, եւ ես անհամբեր սպասում եմ աշխատանքների իրականացմանն ու արդյունքներին»,- նշել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջազգային փորձագետը եւ համագործակցության համար շնորհակալություն հայտնել հայ գործընկերներին:

Ծրագրի նպատակն է գույքագրել, պահպանել եւ խթանել ՀՀ Սյունիքի մարզի ոչ նյութական մշակութային ժառանգությունը՝ որպես տարածաշրջանի տեղական առանձնահատկությունների ու ինքնության դրսեւորում: Ներկայում անհրաժեշտություն է այս ամենի գրանցումը՝ կապված սերնդափոխության եւ ժառանգության փոխանցման ապահովման հետ:

8,3 ՄԼՆ ՖՐԱՆԿ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻՆ

Շվեյցարական համագործակցության գրասենյակը Հայաստանում 2022 թվականի սեպտեմբերի 27-ին կազմակերպեց «Գյուղատնտեսության ոլորտում մասնագիտական կրթության եւ ուսուցման արդիականացում 2022-2025 թթ.՝ ՄԱՎԵՏԱ» երկարաժամկետ զարգացման նախագծի մեկնարկի միջոցառումը:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ կառավարության պաշտոնյաները, այդ թվում՝ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի փոխնախարարը, նախագիծը համաֆինանսավորող եւ իրականացնող գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչները, ինչպես նաեւ շահագրգիռ միջազգային եւ տեղական կազմակերպություններն ու անհատները:

Շվեյցարիան, Ավստրիայի եւ Գերմանիայի հետ համատեղ, մեկնարկեց ՄԱՎԵՏԱ նախածի հիմնական փուլը, որպեսզի աջակցի Հայաստանի կառավարությանը գյուղատնտեսության ոլորտում մասնագիտական կրթության համակարգի բարեփոխումներին: Միջամտության նպատակն է բարելավել գյուղատնտեսության եւ հարակից ոլորտների մասնագետների եւ շրջանավարտների գիտելիքներն ու հմտությունները: Այսպիսով, նախագիծը կնպաստի Հայաստանի գյուղական վայրերում կայուն, միջավայրի համար բարենպաստ, ներառական աճին, եկամուտների ավելացմանը եւ (ինքնա)զբաղվածության բարձրացմանը:

Գործնականում նախագիծը նպատակ ունի այնպես կազմակերպել երիտասարդների ուսուցումը, որ նրանց գիտելիքները, որպես վարձու մասնագետներ կամ ինքնազբաղվածներ, օգտակար լինեն իրենց հետագա մասնագիտական կարիերայի համար: Գործնական ուսուցումն ընկերություններում եւ ֆերմերային տնտեսություններում պետք է համակցվի քոլեջներում սովորած ժամանակակից առաջավոր գիտելիքների հետ: Ընտրված մասնագիտությունները ներառում են անասնաբուժությունը, կաթի եւ կաթնամթերքի տեխնոլոգիան, ֆերմերային գործը, գյուղատնտեսական մեքենաները, կաթնաֆերմայի կառավարումը, պտղատու այգիների այգեգործությունը / ընկույզի եւ մրգերի մշակումը:

Ավելին, նախագիծը կաշխատի դուալ կրթության այս մոտեցումը քաղաքական եւ ինստիտուցիոնալ մակարդակում ամրացնելու ուղղությամբ. քաղաքականությունները պետք է դառնան ավելի համահունչ, կրթական հաստատություններն՝ ավելի արդյունավետ, իսկ պետական եւ մասնավոր հատվածի միջեւ պետք է ձեւավորվի արդյունավետ համագործակցություն: Տեղում նախագիծը կաշխատի Գորիսի պետական գյուղատնտեսական քոլեջի, ՀԱԱՀ-ի Սիսիանի քոլեջի (Սյունիք), Ստեփանավանի պետական գյուղատնտեսական քոլեջի (Լոռի), Բերդի պետական բազմաֆունկցիոնալ քոլեջի (Տավուշ), Էջմիածնի արհեստագործական պետական դպրոցի (Արմավիր) եւ ՀԱԱՀ-ի Երեւանի քոլեջի հետ:

Նախագիծը մեկնարկել է 2021 թվականի դեկտեմբերի 3-ին՝ նախապատրաստական փուլով, որը հաջողությամբ ամփոփվել է 2022 թվականի օգոստոսին: Այնուհետեւ մեկնարկել է իրականացման 1-ին հիմնական փուլը, որը կտեւի մինչեւ 2025 թվականի օգոստոսը՝ 8,3 մլն շվեյցարական ֆրանկ ընդհանուր բյուջեով: Ինչ վերաբերում է Ավստրիայի հետ համագործակցությանը, որոշ տեխնիկական հարցեր պետք է լուծվեն: Արդեն սկզբունքորեն հաստատվել է նաեւ 2-րդ հիմնական փուլը 2026-2030 թվականների համար:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 10 ՃՏՊ. 2 մարդ զոհվել է, 14-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՑԻԱ

Հայաստանում հիմնվել է խխունջաբուծության առաջին ֆերման:

Մասնագիտությամբ ռեժիսոր Վահեն Եվրոպայից ներկրված խխունջների համար Բյուրականում ֆերմա է հիմնադրել: Այն Հայաստանում առաջինն է. խխունջների համար ստեղծվել են հատուկ պայմաններ:

Վահեն ոլորտն իր համար բացահայտել է պատահմամբ, երբ ընկերներից մեկի խնդրանքով սկսեց ուսումնասիրել Հայաստանում խխունջաբուծության պայմանները:

Սկզբում անհաջողություններն էին. աշխատանքների մեկնարկում Վահեն ուսումնասիրում էր հայկական լեռնային խխունջը, որը բուծման ենթակա չէր: Ի վերջո, կնոջ խորհրդով մեկնեց Հունաստան, մասնակցեց դասընթացների եւ սովորեց խխունջաբուծության նրբությունները, մեթոդներն ու եղանակները:

Այժմ Վահեի ֆերմայում խխունջների համար կան բոլոր նպաստավոր պայմանները՝ առողջ սնունդ, անհրաժեշտ խոնավություն... Ամեն ինչ հարմարեցված է: Ֆերմայում բնակվում են եվրոպական երկու տեսակի խխունջներ:

Խխունջների ֆերման Ակբա ֆեդերացիայի եւ Գերմանիայի բնության պահպանության միության (NABU-ի) «Գյուղական տուրիզմի զարգացման ծրագրի» շահառուներից է: Տրամադրված դրամաշնորհի միջոցով Վահեն կարողացել է ֆերմայում տաղավար կառուցել՝ հյուրերին ընդունելու եւ համեղ դելիկատեսներ պատրաստելու համար:

«Ի զարմանս ինձ՝ տեսա, որ խխունջաբուծությունը գյուղատնտեսական, անասնապահական շատ լուրջ ուղղություն է, որը տարածված է Եվրոպայում ու հասել է Լատինական Ամերիկա: Սա եվրոպական գյուղատնտեսական ուղղություն է, համարվում է ծույլերի ֆերմա. քիչ բան կա անելու, քո օրվա ռիթմը դառնում է «խխունջային», դանդաղ, մտածված ու հանգիստ: Վերաբերվում եմ որպես փոքր եղջերավոր անասնապահության, ամենափոքր: Կառուցված տաղավարն օգնեց, որ եկամուտ ունենամ: Հյուրեր ենք ընդունում, խխունջների պատրաստման մաստեր կլաս ենք անում, համտես, հյուրասիրություն: Ակբա ֆեդերացիայի եւ NABU-ի ծրագիրն իրապես կարեւոր է ինձ համար: Եթե ծրագիրը չլիներ, իմ եկամտի աղբյուրը կլիներ ֆերմայի մեծացումից հետո: Իսկ այս ծրագիրն ինձ օգնեց այնքանով, որ կարողանամ ֆերման պահեմ»,- նշում է Վահե Հախվերդյանը:

Վահեի խխունջների ֆերման եզակի տուրիստական ուղղություն է նաեւ տարածաշրջանում:

Ակբա ֆեդերացիան «Ակբա» բանկի միակ նշանակալից մասնակիցն է, բանկի բաժնետոմսերում ունի 83.8 տոկոս մասնաբաժին: «Ակբա» բանկում ունեցած մասնակցության շնորհիվ Ակբա ֆեդերացիան նպաստում է Հայաստանի ողջ տարածքում գյուղատնտեսության, գյուղական շրջաններում փոքր եւ միջին բիզնեսի զարգացմանը, համայնքների զարգացմանը, գյուղական շրջաններում եւ համայնքներում բիզնես միջավայրի աշխուժացմանն ու զարգացմանը, նշված ոլորտներում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող յուրաքանչյուր անձի բարեկեցության աճին:

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

ՀՀ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

«ԼՈՒՅՍ» հիմնադրամն ուսումնասիրել է 2022թ. հունվար-օգոստոս ամիսներին ՀՀ տնտեսության սոցիալ-տնտեսական զարգացումները: Այսպիսով, ռուս-ուկրաինական հակամարտության պայմաններում Հայաստան ներհոսող կապիտալի եւ աշխատուժի էական դրական ազդեցությունները չեն արագանում, նկատվում է աճի տեմպի որոշակի նվազում:

Տնտեսական ակտիվության ցուցանիշն օգոստոսին որոշակիորեն դանդաղել է՝ հուլիսի համեմատ, այն դեպքում, երբ նախորդ տարվա օգոստոսին գրանցվել էր աճի տեմպի կտրուկ դանդաղում: Աճի տեմպի դանդաղման միտում է նաեւ նկատվում ծառայությունների եւ առեւտրի ցուցանիշների դինամիկայում, որոնք առավել կտրուկ էին արձագանքել դրական շոկին եւ հանդիսանում են ՏԱՑ-ին հիմնական նպաստում ունեցող ճյուղերը: Սա խոսում է այն մասին, որ թեեւ տնտեսական ակտիվության աճը դեռեւս բավական բարձր է, առաջիկայում առկա են դրա դանդաղման ռիսկեր:

Ներկա բարձր տնտեսական ակտիվության աճ ապահովող գործոնները բավական զգայուն են:

Ադրբեջանի կողմից սեպտեմբերին հրահրված ռազմական գործողությունների արդյունքում նկատվեց ՀՀ դրամի կտրուկ արժեզրկում, որը չեզոքացավ իրավիճակի կայունացմանը զուգահեռ: Դա ցույց է տալիս, որ ներկա իրավիճակը եւ դեպի ՀՀ ներհոսող ֆինանսական ռեսուրսները բավական զգայուն են երկրում տիրող իրավիճակի նկատմամբ եւ որեւէ բացասական իրադարձության դեպքում կարող են կտրուկ չեզոքանալ, կամ կապիտալը կարող է ՀՀ-ից արտահոսել, ինչի արդյունքում ներկա բարձր տնտեսական ակտիվության տեմպը չի պահպանվի՝ իր բոլոր բացասական հետեւանքներով:

Գնաճի տեմպը որոշակիորեն դանդաղել է, սակայն դա մասամբ պայմանավորված է եղել բազայի էֆեկտով:

Նախորդ տարի նույն ամիսներին գնաճի տեմպի զգալի արագացում էր նկատվել, հետեւաբար գնաճային միտումների արագացման ռիսկերը դեռեւս պահպանվում են: Այդ պայմաններում ՀՀ ԿԲ-ն սեպտեմբերին բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.5 տոկոսային կետով՝ սահմանելով այն 10%, սակայն նախորդ ամիսների վիճակագրությունը ցույց է տվել, որ ԿԲ տոկոսադրույքի բարձրացումից հետո գնաճը կարող է շարունակել արագանալ: Եթե արտաքին աշխարհի գնաճային միտումները, ինչպես նաեւ ՀՀ-ում մեծ պահանջարկը պահպանվեն, ապա գնաճի արագացումը կարող է շարունակվել նաեւ հետագա ամիսներին՝ ունենալով բացասական սոցիալական եւ տնտեսական հետեւանքներ:

Դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների ծավալների բարձր աճերը եւս չեն պահպանվել:

Ընթացիկ տարվա հուլիսին բանկային համակարգի միջոցով դեպի Հայաստան փոխանցված գումարների զուտ ներհոսքը գերազանցել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշն ընդամենը 34.4%-ով, ինչը զգալիորեն ավելի փոքր է, քան նախորդ ամիսների աճերը: Սա եւս արտացոլում է շոկի ժամանակավոր լինելը եւ այն, որ իրավիճակի փոփոխության դեպքում ՀՀ-ում բարձր աճ ապահովող գործոնները կարող են չեզոքանալ: Հետեւաբար կառավարությունը պետք է ակտիվորեն միջոցներ ձեռնարկի ներհոսող կապիտալը տնտեսության արտադրողականությունը բարձրացնող նախագծերին եւ միջոցառումներին ուղղելու նպատակով:

Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքի ծավալների աճը կտրուկ դանդաղել է: Այսպես, 2022թ. հուլիսին բանկային համակարգի միջոցով դեպի Հայաստան փոխանցված գումարների զուտ ներհոսքը (ներհոսքի եւ արտահոսքի տարբերությունը) կազմել է 135.4 մլն ԱՄՆ դոլար, ինչը ընդամենը 34.4%-ով է գերազանցում նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշը այն դեպքում, երբ մայիս եւ հունիս ամիսներին դրամական փոխանցումների ծավալը ավելի քան երեք անգամ էր գերազանցում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշներին: Այս դեպքում եւս նկատվում է բարձր աճերի դանդաղում, ինչը պետք է ազդանշան լինի դրական շոկի ժամանակավոր լինելու մասին:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ, Էջմիածին ք., Անդրանիկ թաղամաս, 108 հասցեում գտնվող 911,2 ք.մ. բնակելի տուն, 4,8 ք.մ. մառան, 2,7 ք.մ. կաթսայատուն, 7,9 ք.մ. /15,8 խ.մ./ պարիսպ եւ 0,072 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 105000000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 17.10.2022թ.-ին, ժ. 12:00-ին, այսուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 30.12.2022թ: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի-էս-Թի» ՍՊԸ-ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը: Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքերը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՕԼԻՄՊԻԱԿԱՆ

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ՄԱՐԶԱՄԵՐՆԵՐԻՆ

Պեկինի ամառային օլիմպիական խաղերից անցել է 14, իսկ ձմեռային խաղերից՝ հաշված ամիսներ, սակայն բոլոր սպորտային կառույցները ոչ միայն շարունակում են գործել, այլ նաեւ շարունակաբար ծառայում են իրենց նպատակին:



Պեկինի օլիմպիական այգին տեղակայված է Չաոյան թաղամասում եւ բացառիկ է նրանով, որ եղել է 2008 եւ 2022 թվականների օլիմպիական մարզաձեւերի հիմնական կենտրոնը: Այգում տեղակայված են խաղերի 9 հիմնական կառույցները, այդ թվում՝ 50 մետր երկարությամբ օլիմպիական լողավազանը, որը 2022 թվականի ձմեռային խաղերի համար վերածվել էր կյոռլինիգի մարզահամալիրի:

Խաղերի ավարտից ամիսներ անց Պեկինի ջրային մարզաձեւերի կենտրոնը կրկին ծառայում է լողորդներին եւ վերածվել է լողի ակումբի, բացի այդ, կառույցի մյուս հատվածում առկա է նաեւ երեխաների համար նախատեսված ջրաշխարհ: Ջրային կենտրոնի այցեքարտերից մեկը ներքին հարկերում տեղակայված սառցադաշտն է, որտեղ իրենց մարզումներն են անցկացնում տարբեր մարզաձեւերի ներկայացուցիչներ:

Մարզահամալիրի առանձին մի անկյունում իր ձեռքի հետքն է թողել բոլոր ժամանակների մեծագույն մարզիկներից մեկը՝ լողորդ Մայքլ Ֆելփսը: Այստեղ մեծ հպարտությամբ են հիշում, որ հենց Պեկինում է, որ Ֆելփսը նվաճել է իր ամենաշատ ոսկե մեդալները՝ 8 ոսկե մեդալ: Օլիմպիական ենթակառույցները խաղերի ավարտից հետո էլ ծառայում են մարզասերներին իրենց ամբողջ ներուժով:

Չմշկավազքի ազգային կենտրոնը, որը տեղավորում է 12 հազար հանդիսական, բացառիկ ճարտարապետական լուծումներով սպորտային կառույց է: Հենց այստեղ՝ չմշկավազքի ազգային կենտրոնում էր, որ 2022 թվականի ձմեռային օլիմպիական խաղերում նոր ռեկորդներ գրանցվեցին, եւ թարմացվեցին նախորդները: Սահադաշտը բաց է պեկինցիների համար, որոնք անգամ սիրողական մակարդակով ցանկանում են սահել օլիմպիական արդեն իսկ լեգենդար սառույցի վրա:

Օլիմպիական խաղերի ավարտից հետո ոչ բոլոր երկրներին է հաջողվում պահպանել սպորտային կառույցները, սակայն Չինաստանը կարողացել է պահպանել սպորտային ենթակառուցվածքները եւ դրանք ծառայեցնում է երկրում սպորտի մասսայականացմանը:

ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

ՆԿԱՐԱՀԱՆՈՒՄՆԵՐԸ ՍԿՍԵԼ ԵՆ

Առաջին ալիքի թիմը փետրուարյան էջում լուսանկարներ է հրապարակել Երեւանում կայանալիք «Մանկական Եվրատեսիլ 2022»-ի խորհրդանիշին նվիրված պրոմո հոլովակի նկարահանումներից: Հոլովակի ռեժիսորը Արամայիս Սահակյանն է, հերոսուհին՝ «Մանկական Եվրատեսիլ 2021»-ի հաղթող Մալենան:

«Մանկական Եվրատեսիլ 2022» երգի մրցույթի խորհրդանիշը հոլն է, մրցույթի կարգախոսն է՝ «Պտտիր հրաշքը»: Հոլովակի նկարահանումներն իրականացվել են Երեւանի Կոնդ թաղամասում, Մանկական երկաթուղու այգում, Սքեյթ պարկում եւ Համալիրի տարածքում:

Միջազգայնորեն ճանաչված խաղալիքի այս տեսակը հատուկ է հայկական մշակույթին եւ զարդարված է ազգային նախշերով: Այդ նախշերը Հայաստանում կարելի է տեսնել պատմական-ճարտարապետական հուշարձանների, գորգերի եւ հագուստի վրա: Ավանդական փայտե խաղալիքներին տրվել է նեոնային տեսք, որն արտացոլում է ժամանակակից Հայաստանը:

Երեւանում կայանալիք 20-րդ՝ հոբելյանական մրցույթն անցկացվելու է դեկտեմբերի 11-ին Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում: Այս տարի «Մանկական Եվրատեսիլ»-ին մասնակցում է 16 պետություն:

ԼՈՒՐԵՐ

ՑԱՎԱԼԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի գլխավոր մարզիչ Խոակին Կապառոսը ցավալի է որակել Իռլանդիայի հավաքականից կրած պարտությունը:

«Շատ ցավալի արդյունք ստացվեց: Չգիտեմ, թե ինչու է Հայաստանի հավաքականի հետ նման բան տեղի ունենում, երբ հանդես է գալիս Իռլանդիայում: Կրկնվեց այն, ինչ եղել էր 2011 թվականին: Բայց այստեղ գնահատելի է այն, թե ինչպես թիմն արձագանքեց խաղադաշտում»,- խաղից հետո ասել է Կապառոսը:

Վերջինիս խոսքով՝ երկրորդ կեսում մրցակիցը սկսել է հասկանալ, որ Հայաստանի հավաքականը կարող էր փոխել հանդիպման ելքը:

Ազգերի լիգայի B դիվիզիոն 1-ին խմբի վերջին տուրում Հայաստանի հավաքականը, մրցելով Իռլանդիայի ընտրանու հետ, զիջել է 3:2 հաշվով: Ազգային թիմի կազմում գոլերի հեղինակներ դարձել են Արտակ Դաշյանը եւ Էդուարդ Սպերցյանը:

Հայաստանի հավաքականը ենթախմբում զբաղեցրեց վերջին հորիզոնականը՝ հավաքած 3 միավորով: Խոակին Կապառոսի գլխավորած թիմը 6 խաղերում սեփական դարպասն ընդունեց 17 գնդակ եւ մրցակիցների դարպասն ուղարկեց միայն 4-ը: B դիվիզիոնի 1-ին խմբում առաջին տեղը զբաղեցրեց Շոտլանդիան՝ 13 միավորով: Հայաստանի հավաքականը հանդես կգա ազգերի լիգայի C դիվիզիոնում:

ՄԻԱԿ ԳՈԼԸ՝ 88–ՐԴ ՐՈՊԵԻՆ

Իսպանիայի հավաքականի գլխավոր մարզիչ Լուիս Էնրիկեն մեկնաբանել է 1:0 հաշվով հաղթանակը Պորտուգալիայի թիմի նկատմամբ եւ Ազգերի լիգայի կիսաեզրափակիչի ուղեգիր նվաճելը: Միակ գոլը 88-րդ րոպեին խփել է Մադրիդի «Աթլետիկոյի» հարձակվող Ալվարո Մորատան:

«Ֆուտբոլը հրաշալի մարզաձեւ է, որում հաղթանակը տխրության դեմ լավագույն հակաթույնն է: Պորտուգալիան գերազանց թիմ է: Առաջին խաղակեսում չափազանց շատ պահանջեցի վերահսկել գնդակը, եւ դա հաջողվեց: Առաջին խաղակեսում մրցակցին ցույց տվեցինք, որ գնդակը մերն է: Երկրորդ խաղակեսում զգացողություն ունեի, որ գոլն անպայման կլինի: Մենք դարձյալ եզրափակիչ փուլում են, եւ դա մեծ ուրախություն է»,- Լուիս Էնրիկեի խոսքը մեջբերում է ՈՒԵՖԱ-ի մամուլի ծառայությունը:

Իսպանիան խմբում 11 միավորով գրավեց առաջին տեղը, Պորտուգալիան 10 միավորով զբաղեցրեց երկրորդ տեղը: Կիսաեզրափակիչ են դուրս եկել նաեւ Նիդեռլանդների, Իտալիայի եւ Խորվաթիայի հավաքականները: Ազգերի լիգայի կիսաեզրափակիչի հանդիպումները տեղի կունենան 2023թ. հունիսի 14-15-ին, եզրափակիչն ու երրորդ տեղի համար խաղը՝ հունիսի 18-ին:

● *Սեպտեմբերի 29-ին Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Կուլիսներում կամ թատրոնի անատոմիա» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-6000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՞Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Եթե կազմակերպությունն իրականացնում է բեռնափոխադրում ՀՀ-ում գրանցված իր տրանսպորտային միջոցներով, հանդիսանում է բացառապես հաստատագրված վճար վճարող, պե՞տք է արդյոք ճանապարհային վճար վճարի:

Սեւակ Գասպարյան (43 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Ճանապարհային վճարների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ ճանապարհային վճար վճարողներ են համարվում տրանսպորտային միջոցների սեփականատերերը, իրենց պատկանող տրանսպորտային միջոցներով կամ սույն օրենքով սահմանված գործունեությամբ զբաղվելու նպատակով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվող ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները: Նույն օրենքի 10.1-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ-ում գրանցված բեռնատար ավտոմեքենաներով ավտոմոբիլային ճանապարհներով երթեւեկության վճարը ՀՀ տարածքում իրականացվող, ՀՀ-ից դուրս եկող կամ ՀՀ մուտք գործող բեռնափոխադրում (բեռնափոխադրումներ) իրականացնելու յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկվում է՝ ելնելով յուրաքանչյուր բեռնատար ավտոմեքենայի բեռնատարողությունից, նույն օրենքի 6.1-րդ հոդվածով սահմանված ամսական դրույքաչափերով: Հաստատագրված վճարները եւ ճանապարհային վճարները գործում են առանձին եւ մեկը մյուսով պայմանավորված չեն, ընդ որում՝ ճանապարհային վճար նախատեսված է միայն 20 եւ ավելի տոննա բեռնատարողությամբ ավտոմեքենաների համար:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». «Ճանապարհային վճարի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածին համապատասխան՝ ճանապարհային վճար վճարողներ են համարվում տրանսպորտային միջոցների սեփականատերերը, իրենց պատկանող տրանսպորտային միջոցներով կամ նույն օրենքով սահմանված գործունեությամբ զբաղվելու նպատակով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվող ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները:

Էջը՝ ՆԱԻՐԻԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞ւմ կողմից է անձին տրամադրվում սոցիալական աջակցությունը:

Լյուդմիլա Վարդազարյան (51 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Սոցիալական աջակցությունը կյանքի դժվարին իրավիճակը կանխարգելելու կամ հաղթահարելու նպատակով անձին (ընտանիքին, սոցիալական այլ խմբին) Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված մեկ կամ մի քանի սոցիալական ծառայությունների տրամադրումն է Հայաստանի Հանրապետության եւ (կամ) տեղական ինքնակառավարման մարմնի կողմից:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Սոցիալական աջակցության իրավունք ունի Հայաստանի Հանրապետությունում բնակվող յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Շիրակի մարզում

Շիրակի մարզի բնակիչ 37-ամյա Արման Հ-ն իր վարած «ՎԱԶ 2105» մակնիշի ավտոմեքենայով Պեմզաշեն-Մարալիկ ավտոճանապարհին բախվել է 2 խոշոր եղջերավոր անասունի: Վթարի հետեւանքով տուժածներ չկան, խոշոր եղջերավոր անասունները վնասվածքներ են ստացել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **28.09.2022**
Հասցեն՝ Գերպրոնիրքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: